

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՐԳԱՄԵԾԱՐ ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ ԱԼԼԱՀՇՈՒՔՅՈՒՐ
ՓԱՇԱ-ԶԱԴԵԻՆ,
ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿՐՈՆԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Զերդ Սրբություն, Սրբազնագույն Կաթողիկոս Վազգեն Ա, Հարգամեծար Եղբայր Շեյխ-ուլ-Իսլամ Ալլահշուքյուր Փաշա-Զադե,

Փետրվարի 22-ին կլրանա վեց տարի այն պահից, որ սկիզբ առավ եղբայրասպան միջադեպը, որում ընդգրկված են ադրբեջան և հայ ժողովուրդները: Վեց տարի հոսում է արյունը: Վեց տարի երկու ժողովուրդներ, որոնք նախկինում ապրում էին խաղաղ պայմաններում, բերում են զոհեր պատերազմի անկուշտ կուռքին:

Կարծում եմ, եկել է ժամանակը ասելու ինքներս մեզ՝ արդեն այսօր, այժմ մենք պիտի անենք ամեն ինչ, որպեսզի թշնամության արյունահեղ ժամանակաչափը կանգ առնի: Եվ մենք, իբրև հավատացյալների հոգևոր խրատատուներ, պարտական ենք տալ տառապած մարդկանց խաղաղության մի նոր հույս:

Թույլ տվեք, թանկագին Եղբայրներ, այս առիթով առաջարկել, հնարավորին չափ արագ համատեղ դիմել միջադեպում ներգրավված բոլոր կողմերի լիդերներին՝ կոչ անելով անհապաղ դադարեցնելու արյունահեղությունը և հեռացնել զորքերը միմյանցից հեռավոր դիրքերի: Դա կարող է վիճելի հարցերի կապակցությամբ երկխոսության հիմք հանդիսանալ, որը, հավա-

տում եմ, դիմակայության կողմերին կբերի արդար և խաղաղ լուծմանը առկա պրոբլեմների:

Իմ կողմից, ես պատրաստակամություն եմ արտահայտում դիմել Ռուսաստանի ղեկավարությանը՝ խնդրելով օգնել կոնֆլիկտի շրջանում խաղաղությանը հասնելու: Ես նույնպես պատրաստվորվում եմ ինձ վրա վերցնել միջնորդության որևէ հանգամանք Հայաստանի և Ադրբեջանի կրոնական համայնքների միջև շփումների, եթե այդպիսին Դուք հարմար գտնեք:

Ուրախությամբ վերհիշելով մեր հանդիպումները Ձեզ հետ Մոսկվայում անցյալ տարի և այդ հանդիպումների ընթացքում ստորագրված փաստաթղթերը, որոնք լի էին խաղաղության և համերաշխության ծարավով, ես հաստատորեն հավատում եմ, որ այսօր, երբ Բարձրյալը կարող է մեզ պատերազմը դադարեցնելու մի հնարավորություն տալ, մենք կրկին համախոհությամբ կենդանի կամուրջ կհանդիսանանք թշնամիների միջև և Աստուծո օգնությամբ նրանց կբերենք համերաշխության և եղբայրության:

Սիրով և լավագույն ցանկություններով՝

ԱԼԵՔՍԵՅ Բ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Մոսկվա,
24 փետրվարի 1994 թ.